Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարանի
Հոգաբարձուների խորհրդին նույն
խորհրդի անդամ Գայանե Շագոյանից

Դիմում

Խնդրում եմ ազատել ինձ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի անդամ լինելու պաշտոնից, քանի որ անընդունելի եմ համարում Նիկոլ Փաշինյանի և իր կառավարության մոտեցումը Ամուլսարի շահագործման խնդրին: Նման վերաբերմունքով՝ թե՛ հանքարդյունաբերության հարցին, թե՛ խնդիրը բարձրացնող քաղաքացիներին, թե՛ ազդակիր համայնքի բնակիչներին, ոտնահարելով նրանց իրավունքներն ի շահ կասկածելի կորպորացիայի, որի խարդախություններն ու ՀՀ օրենքների շրջանցումը բավականաչափ ապացուցված են ինչպես հայաստանյան մասնագետների կողմից, այնպես էլ արտասահմանյան ELARD ընկերության հենց կառավարության պատվիրած փորձաքննությամբ, գործող իշխանությունը ոչ միայն դրժում է իր նախընտրական ծրագրի հանքարդյունաբերության ոլորտի կարգավորման սկզբունքները, այլև խախտում է ՀՀ Սահմանադրությունում ամրագրված ժողովրդավարական կառավարման հիմնարար դրույթները: Հասկանալով ծրագրի աղետալի և անդառնալի հետևանքները՝ անհնարին են համարում ներկայացնել Նիկոլ Փաշինյանի կառավարությունը Հոգաբարձուների խորհրդում կամ որևէ այլ ձևաչափում:

Գայանե Շագոյան,
պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող
10/09/2019